ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 2108-Ա **03 դեկտեմբերի 2021 թ.**

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Ստեղծել Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումները համակարգող աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Անահիտ Չարենց (նախագահ)	Եղիշե Չարենցի կրտսեր դուստրը, բանասիրական գիտությունների թեկնածու (համաձայնությամբ)
Արայիկ Խզմալյան	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ
Աստղիկ Մարաբյան	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետ
Երանուհի Մարգարյան	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետի տեղակալ (քարտուղար)

Գայանե Մելքոմ Մելքոմյան	Երևանի քաղաքապետի տեղակալ (համաձայնությամբ)
Արա Սիմոնյան	ՀՀ Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ (համաձայնությամբ)
Ժաննա Մանուկյան	«Եղիշե Չարենցի տուն-թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն
Վահագն Սարգսյան	«Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն
Գոհար Չարենց	«Եղիշե Չարենցի տուն-թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ավագ գիտաշխատող (համաձայնությամբ)
Սեյրան Գրիգորյան	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հայ բանասիրության ֆակուլտետի հայ նորագույն գրականության ամբիոնի վարիչ (համաձայնությամբ)
Վարդան Դևրիկյան	«Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն (համաձայնությամբ)
Էդվարդ Միլիտոնյան	Հայաստանի գրողների միության նախագահ (համաձայնությամբ)
Դավիթ Գասպարյան	Գրականագետ, գրաքննադատ (համաձայնությամբ)

2. Աշխատանքային խմբին՝

1) 2021 թվականի դեկտեմբերի 10-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 13-ը ներառյալ ապահովել Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների ծրագրերի ուսումնասիրումը, դրանց վերաբերյալ դիրքորոշումների ամփոփումը և հաստատված միջոցառումների կազմակերպման համակարգումը.

2) աշխատանքներն ավարտելուց հետո 3-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկանք:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արայիկ Խզմալյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ**

X